

ՕԴԸ



Օդը գոյութիւն ունի՞.
Օդին մէջ իրերը կրնա՞ն թռչիլ:

Օդը անհրաժեշտ է կրակի համար:
Օդը ծանրութիւն ունի:
Օդը կը բաղկանայ երկու կազերէ.—
բթուածին եւ բորոկածին:



Օդը անհրաժեշտ է վառելու համար:

Ունենալ.— մոմ, պնակ, շիշ (լայն բերանով) եւ


ջուր:

Փորձ.— 1. մոմը փակցուր պնակին
(Տես պատկերը).

2. ջուր լեցուր պնակին մէջ.

3. վառէ՛ մոմը.

լայն բերանով շիշով գոցէ՛ մոմը:



Ի՞նչ կը պատահի.....

Օդը անհրաժեշտ է վառելու կամ այրելու համար:

Առանց օդի կրակ չ'ըլլար:

Երբ նոյն փորձը կատարենք քիչ մը ջուր աւելցրնելով պնակին մէջ, կը տեսնենք, թէ ջուրը քիչ մը կը բարձրանայ շիշին մէջ: Շիշին մէջ ջուրին բարձրանալը ապացոյց է, թէ մոմին վառիլը կը սպառէ օդէն մաս մը: Ապա մոմը կը մարի երբ օդին այդ մասը կը սպառի:

Օդին սպառած մասը կը կոչենք թթուածին, իսկ մնացած մասը կը կոչենք բորոկածին: Թթուածինը եւ բորոկածինը կազային նիւթեր են:

Շնչաւորները ապրելու համար թթուածինի պէտք ունին:

Գծէ՛ եւ կատարէ փորձը:



ՕԳԸ ԾԱՆՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ:

Ունենալ.

կշիռի մը, կշիռի չափեր, փուչիկ մը, դերձան:

Փորձ.


1.— Փուչիկը օդով լեցուր եւ բերանը դերձանով կապէ.

2.— Օդով լեցուն փուչիկը դիր կշիռին մէկ նժարին մէջ, իսկ միւս նժարին մէջ դիր կշիռի չափեր մինչեւ որ կշիռին մէտը (սլաքը) հաւասարութիւն ցոյց տայ:


3.— Փուչիկին օդը պարպէ, ապա փուչիկը դիր կշիռին նոյն նժարին մէջ:

Եզրակացութիւն


.....




Ամբողջացո՛ւր.



¹ Պարապ գնդակին ծանրութիւնն է կրամ:



² Օղով լեցուն գնդակին ծանրութիւնն է ... կրամ:



³ Յոյց տո՛ւր թիւ 3 եւ 4 կշիռֆներուն մէտը (սլաֆը):



⁴ Թիւ 1 եւ 2 պատկերներէն կ'եզրակացնենք, թէ օդին ծանրութիւնը կրամ է:

Օդը շնչառությունն անհրաժեշտ է:



Լուղորդը կոնս-
կին վրայ ի՞նչ ու-
նի:
Ինչո՞ւ:

Ապակիէ շիշի մը մէջ մուկ
մը կամ միջատ մը դնենք եւ
շիշին բեանը գոցենք: Կը
տեսնենք, որ մուկը կամ մի-
ջատը շատ ժամանակ չան-
ցած կը սատկի:



Կենդանիները շնչառու-
թեամբ կը սպառեն օդին
թթուածինը. առանց թրթ-
ւածինի չեն կրնար ապրիլ:

Ո՞ր բոյսը աւելի երկար
կ'ապրի

Ինչո՞ւ:

.....

.....

